

Հ ու շ ա գ ի թ

Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը պարտավոր է Ձեր խնդրանքով Ձեր ազատագրկման մասին անմիջապես տեղեկացնել Ձեր հայրենի երկրի հյուպատոսական ներկայացուցչությանը: Տեղեկատվությունը կատարվում է դատարանի, դատախազության կամ այն հիմնարկի կողմից, որտեղ իրականացվում է կալանքը:

Բացի այդ, Ձեր հայրենի երկրի արտասահմանյան ներկայացուցչությունը **կարող է նաև** տեղեկացվել այն փաստերի մասին, որոնց հիման վրա էլ իրականացվել է Ձեր ազատությունից զրկումը՝ **եթե Դուք տվել եք ձեր համաձայնությունը** այդպիսի տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ: Ձեր այդ համաձայնությունը Դուք ցանկացած ժամանակ կարող եք հետ վերցնել:

Ի հավելումս վերը նշվածի, Ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն բանի վրա, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և տարբեր պետությունների միջև կնքված են պայմանագրեր, որոնք նախատեսում են արտասահմանյան ներկայացուցչությանը տեղեկացնելու պարտավորություն՝ նաև առանց Ձեր համաձայնության կամ Ձեր կամքին հակառակ: Նման պայմանագրեր ներկայումս գոյություն ունեն հետևյալ պետությունների հետ՝

Դոմինիկա, Ֆիջի, Գրենադա, Հունաստան, Գայանա, Իտալիա, Յամայկա, Լեսոտո, Սալավի, Սալթա, Մավրիկիոս, Մոնակո, Սիերա Լեոնե, Իսպանիա*, Սենթ Քիթս և Նևիս, Սենթ Վինսենթ և Գրենադիններ, Թունիս, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և Հյուսիսային Իռլանդիա (ներառյալ Լա Մանշի կղզիները, Մանի կղզին և Բրիտանական արտերկրյա տարածքները (Անգուիլա, Բերմուդա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ, Տոբլենդյան կղզիներ, Ջիբրալթար, Կայմանյան կղզիներ, Սոնսերատ, Պիտկիբրնի կղզիներ, Սուրբ Հելենա, Համբարձում և Տրիստան դա Կյունա, Թուրք և Կայկոս կղզիներ)), Կիպրոս:

Եթե դուք այս երկրներից մեկի քաղաքացի եք, Ձեր երկրի արտասահմանյան ներկայացուցչությունը ամեն դեպքում, անգամ եթե Դուք չեք ցանկանում, կտեղեկացվի ձեր ազատագրկման մասին՝ դատարանի, դատախազության կամ այն հիմնարկի կողմից, որտեղ իրականացվում է կալանքը:

Իհարկե, Դուք կարող եք ազատությունից զրկելու մասին անձամբ տեղեկացնել Ձեր հայրենի երկրի ներկայացուցչությանը: Դուք ցանկացած ժամանակ կարող եք նրանց ուղարկել նաև այլ տեղեկություններ:

* Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս դեպքում պաշտոնական ծանուցում կիրականացվի միայն այն դեպքում, եթե Դուք հնարավորություն չունեք ինքներդ պահանջել տեղեկացնելու Ձեր երկրի մոտակա հյուպատոսական ներկայացուցչությանը: